ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2026 թվականի N 2028

ԷԴՄՈՆԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 11-րդ կետի, 24-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 178-Ն որոշումների, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2026 թվականի ապրիլի 13-ի N 01/03.1/03165-2026 գրությամբ (մուտք՝ 2026 թվականի ապրիլի 13-ի N Պ-1227) տրամադրված լիազոր մարմնի համաձայնությունը և հիմք ընդունելով Էդմոնդ Կիրակոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի մարտի 05-ի N Ք-1406).

1. Էդմոնդ Կիրակոսյանին պատկանող (հիմք՝ 2026 թվականի փետրվարի 11-ի N 11022026-07-0085 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 1/9 հասցեում գտնվող 07-002-0116-0496 կադաստրային ծածկագրով 0.28899 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման չափորոշիչները փոփոխել բարձրահարկ կառուցապատման գոտու կառուցապատման չափորոշիչների՝ ԲՆԿԳ-4:
3. Էդմոնդ Կիրակոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 293 990 (երկու հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր իննսուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Աբովյան համայնքի ավագանու կողմից հաստատվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. ապրիլի 29
ք. Աբովյան